# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

—— ————— 2022 թվականի N ----- Լ

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի N 1332-Ն որոշման հավելված 2-ի 42-րդ կետի կիրարկման նպատակով՝

1. Հաստատել կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին և առաջարկել ինքնավար մարմինների և անկախ պետական մարմինների ղեկավարներին, տեղական ինքնակառավարման մարմիններին՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացնել կիսամյակային հաշվետվություն սույն որոշմամբ հաստատված հավելվածում ներառված գործողությունների կատարման մասին:
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց և ամփոփելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դրանց հրապարակումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքէջերում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի** **Ն. Փաշինյան**

**Հանրապետության**

**վարչապետ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

կառավարության 2022

թվականի.... N ... որոշման

**ԾՐԱԳԻՐ**

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

| **N** | **Գործողությունը** | **Հաղորդակցման եղանակները և միջոցները** | **Ակնկալվող արդյունքը 2022** |
|---|---|---|---|
| 1. | Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկման արշավների իրականացում | Հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսահոլովակների հեռարձակում/ցուցադրում, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում տեղեկատվական նյութերի հրապարակում | Հանրային իրազեկման<br>հասարակությունը յուրս<br>տեղեկացվում է Հակակ<br>միջոցառումների իրակ<br>արդյունքում ակնկալվող |
| 2. | Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների իրավասությունների և գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ | Հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում տեսահոլովակների հեռարձակում/ցուցադրում, տեղեկատվական | Տեղեկատվական նյութե<br>հրապարակվում/վերահ<br>հեռարձակվում/ցուցադ<br>առնվազն 3 անգամ): |

| | | | |
|---|---|---|---|
| | | նյութերի հրապարակում | |
| 3. | Ազդարարման համակարգի և ազդարարման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության արշավի իրականացում | Հեռուստատեսությամբ և սոցիալական ցանցերում գովազդային տեսահոլովակների հեռարձակում/ցուցադրում, տեղեկատվական նյութերի հրապարակում սոցիալական ցանցերում, զանգվածային լրատվության միջոցներում | Ազդարարման համակա իրազեկում (յուրաքանչյու<br><br>Ազդարարման մեխանիզ azdararir.am հարթակը), ընթացակարգի վերաբե առնվազն 4 անգամ:<br><br>Ազդարարման դեպքերի սոցիալական ցանցերով միջոցներով (յուրաքանչ առնվազն 2 անգամ): |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Կաշառքի բացասական ազդեցության վերաբերյալ տեղեկատվական արշավ | Մեծ արշավի իրականացում 3 անիմացիոն տեսանյութերով, 5-6 պաստառներով/արտաքին գովազդային վահանակներով, տեքստային հաղորդագրություններով | Կաշառքի բացասական<br>տեղեկատվական արշա<br>պաստառներ/արտաքի<br>տեղադրվել/փակցվել Ե<br>խոշոր համայնքներում:<br><br>Տեքստային հաղորդագր<br>բջջային օպերատորներ<br>հաղորդագրություններ<br>(viber, whats up, telegra<br>1 անգամ: |

| | | | |
|---|---|---|---|
| 5. | Պետության հետ հարաբերություններում անձանց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկում | Սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում տեղեկատվական նյութերի հրապարակում, տեղեկատվական թերթիկների օգտագործում: | Անձանց իրավունքների տեղեկատվական նյութե հրապարակվում/վերահ առնվազն 2 անգամ, տե են համապատասխան ս ընդունելու վայրում: |
| 6. | Պետության հետ հարաբերություններում բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ իրազեկում | Սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում տեղեկատվական նյութերի հրապարակում | Պետության հետ հարաբ մեխանիզմների/ընթացւ ամսական առնվազն 2 ս հրապարակվում/վերահ ցանցերում և պաշտոնա |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով վերապատրաստումների և սեմինարների անցկացում: | Վերապատրաստումների և սեմինարների իրականացման միջոցով | Ընտրվել են այն մասնա անցկացվեն վերապատ<br><br>Մշակվել են վերապատր թեմաները, դրանց անցն<br><br>Ընտրված մասնավոր ոլ վերապատրաստումներ մասնավոր ոլորտի աշխ կոռուպցիան, ինչ իրավ ունեն իրենք կոռուպցիո նկատելիս: |